

Ի՞նչ յայտնի է թէ աս ձիով ճամբայ
երթաս նե՛՛ս՝ անվախ կ'ըլլաս , վտանգա-
ւոր տեղեր չերթար , ժամերով առաջ
կ'իմանայ կը զգայ գող կամ թշնամի ե-
ղած տեղը , գլուխը կը դարձնէ :

Պառկիս նէ, պահապանի պէս քովդ
կը սպասէ . թշնամի գալու ըլլայ նէ՝
խինջելով իմաց կուտայ , գլխովը կը
դրդէ , եւ երթանք ըսելու պէս շարժ-
մունքներ կ'ընէ : Ինկեր կամ բարեկամ
գալու է նէ , ուրախութեան մը ցոյց
կուտայ , գլուխը վեր վերցընելով կը
խինջայ :

Ի՞նչ ձիերուն քով աս տիրասէր բնաւորութիւնը կայ որ գետէն անցնելու առտէն յանկարծ տէրը ջուր իյնայ նէ՛ լաթէն կրխածնէ անմիաստ ցամաքը կը բերէ կը հանէ : Տէրը թշնամիէ զարնուի և մեռնի ալ նէ, ոտքով գլխով լծնամոյն մէջ կը մտնէ կը կռուի. ոչ ինքզինքը ձեռք կուտայ, ոչ ալ տիրոջը մեռելը, և խածնելով կը տանի ապահով տեղ կը հանէ : Ա՛յ երջապէս անանկ սաստիկ զգացողութիւն ունեցող կենդանի մըն է որ իրեն համար տրուած ստակը փութի չի հաներ :

Ըրաբխայէն տեսակ մը ձի ալ կ'ելէ , որուն Բիւրեճի անուն կուտան . նժոյգի բնաւորութիւն չունի , բայց Տաճկաց առջևը շատ յարգի է : Ըտոր վրայ ալ աս առասպելը կ'աւելցընեն Տաճկիւները թէ հինգշաբթի իրիկունները որ ուր բաթ լուսնալու է՝ աղէկ չուտեր , փղի պէս կը շարժի , և կը տըքայ . Տաճկիւները կ'ըսեն որ « Հէյէ Գէժ Էյիեր ճահա Էճէլէր » , իբր թէ հո- կանչողներուն ձայնակից կ'ըլայ :

७. ७

¹ ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄՑՄՈՒՆՔՆԵՐ

Ինչո՞ւ է հողէ ամանի մէջ լեցուցած
ջուրը սառելու որ ըլլայ ամանը կը կո-
տրի :

— Ո՛րքան զի ջուրը երբոր իր ջերմութիւնը կը կտրւեցնէ ու կը սկսի պաղել, մասունքները կը սկսին իրարու

Հետ միանալ . և թէ որ շուտով պաղել-
լու ըլլայ կը բիւրեղանան , անով սառույ-
ցը անկիւնաւոր կ'ըլլայ ու մէջը օդ կը
մտնէ . որուն ընդարձակելովը ամանը
կը կոտորի : Եւ ամանապէս աղբիւրներուն
անցնելու ճամբան երբեմն կ'աւրուի ,
քարերը կը կոտորին , ծառերը կը ճեղ-
քին , ճամբաներուն յատակը վեր կը
բարձրանայ սառույցին օդէն ընդարձա-
կելովը :

Ինչո՞ւ երբոր ամաններուն մէջի ջուրը սառի՝ հալելու ատեն ամանը կը կոտորի .

— Ո՛րքան զի ջերմութիւնը սառնին
մէջ Թափանցելով զանդուածը կը շատ
ցընէ . ուստի վրայի կողմէն երբոր սա
ռը կը սկսի հալել, հալածը ամանին
տակը կ'իջնայ . անով կամաց կամաց
լեցուելով օդը դուրս կը հանէ , ու եւ
լելու ատեն սառնին կտորները կ'ընդար
ձակի , և ամանը կը կտորի :

Ինչո՞ւ ջուրը երեսէն կը սկսի սառիլ .

— Ուսան զի ջրին երեսը անմիջապէս դրսի օդին հետ հաղորդակցուլ թիւն ունենալով՝ նախ ինքը կը կորսնցընէ ջերմութիւնը, և վարի կարգերը կամաց կամաց կը սառնին երբոր իրենց ջերմութիւնը կը կորսնցընեն ցրտին սաստկուլթեամբը։ Ուստի սխալ է ըսելը թէ սառը ջրին տակէն կը սկսի սառիլ, ու իրեն թեթեւութեամբ ջրին երեսը կ'եղէ։

Ինչո՞ւ անձրև չեկա՞՜ կատուները ի
րենց թաթիկովը ականջսին կը քերեն .

— Ո՛ր ամեն զի բոլոր մթնոլորտը պատած խոնաւութիւնը իրենց մազին մէջ լծափանցելով՝ կը սկսի քերուիլ . անոր համար կը ջանան քերելով մեղմացընել : Ի՞նչ բանս շատ մարդու ալ կը հանդիպի , որոնց մազը խոնաւութենէն լծըլելով քերուիլ կը սկսի :

Սնչով երբոր դուրպան չոր ըլլայ՝ դիւ
րաւ ոտք կը մտցուի, և երբոր թաց՝
դժուարաւ .

— Մի տան զի խոնաւութիւնը գուր
պային թէլէրը ուռեցրնելով կը պզտիկ
ջրնէ՛ անպըր։

Ի՞նչ պատճառաւ շատրուաններուն
ջուրը վեր կը գատքէ :

— Ս ան զի ջուրը կամ ամանով մը կը բարձրացնեն, և կամ բնական կերպով աղբիւրը բարձր ըլլալով՝ խողովակով մը կ'իջեցնեն ան տեղը ուսկից որ պիտի ցատքեցնեն. ջուրը հոն գալուն պէս խողովակը կը նեղցնեն՝ որ աւելի ուժով դուրս ելլէ, և բաւական բարձրանայ՝ ընդունարանին բարձրութեանը համեմատ :

Ենչու ջուրը ջրհանին մէջէն 32 ոտքէն աւելի չկրնար բարձրանալ, թէպէտ և ջրհանը 40 ու 50 ոտք բարձր ալ ըլլայ :

— Ս ան զի փորձուած բան է որ ջրհանին մէջ ջրին սիւնակը միշտ 32 ոտք կը բարձրանայ . իսկ անկէջ աւելի որչափ որ ալ բռնութիւն տաս չբարձրանար . որով ըսել է թէ 32 ոտք բարձրութեամբ ջրի սիւնակը հաւասարակշիռ կ'ըլլայ դրսի մթնոլորտի սիւնակին հետ, որ հորին կամ վարի եղած մեծազանգուած ջրին երեսը ճնշելով ջրի սիւնակը դատարկ խողովակին մէջէն վեր կը բարձրացնէ :

Երրորդ վրայ :

Ենչո՞ւ մարմինները զանազան գոյն ունին, ինչպէս սև, ճերմակ, կարմիր, և այլն :

— Ս ան զի լուսոյ ճառագայթները եօթը գլխաւոր շառաւիղ կը բաժնուին. այսինքն մանուշակագոյն, նարնջի, կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, և լեղակի : Լուստի երբոր լոյսը մարմնոյ մը վրայ կը զարնէ, թէ որ աս մարմինը քնութեամբ բոլոր ճառագայթները առանց իրարմէ զատելու անդրադարձը ներու ըլլայ՝ ճերմակ կ'երևնայ . վասն զի ճերմակը բոլոր մէկալ գոյներուն բովանդակութիւնն է . թէ որ կարմիրին ճառագայթը միայն անդրադառնալու ըլլայ, և թողու որ մէկալ ճառագայթները խոտորնակի անցնին՝ կարմիրը կ'երևնայ . թէ որ բոլոր ճառագայթները ընկղմելու ըլլան բաց 'ի կանանչէն, կանաչ գոյնը կ'երևնայ : Իսկ բոլոր ճառագայթները ընկղմող միայն սև գոյնն

է . վասն զի սևը ամենեւին լոյս չունի :

Ենչո՞ւ երկինքն ալ կապոյտ կ'երևնայ :

— Ս ան զի մթնոլորտը որ օդով լեցուած է, յատկութիւն մը ունի որ բաց 'ի կապուտէն բոլոր մէկալ ճառագայթները իրեն կը քաշէ . անոր համար երկինքը կապոյտ կ'երևնայ :

Ենչո՞ւ երբոր հայրի մը վրայ նայելու ըլլանք, դէմքերնիս ապակիին ետեւը նկարուած կ'երևնայ, և նոյն ապակիին վրայ նկարուած չերևնար :

— Ս ան զի որ և իցէ առարկայի պատկերը իր ճառագայթներուն ծայրը միայն կը նկարուի . բայց որովհետև ճառագայթները ապակիին վրայ կը ցլանան, իրենց մէջ տեղի միջոցը կը չափուի առարկայէն դէպ 'ի հայրին, և ետքը հեռաւորութիւնը հայրէն դէպ 'ի առարկան . ուստի առարկան որչափ հեռու ըլլայ հայրին երեսէն, այնչափ ալ հեռու կ'ըլլայ հայրին մէջի պատկերը :

Ենչո՞ւ ջրին մէջ նայելու որ ըլլանք գլխիվար կը տեսնուինք :

— Ս ան զի ջրին մակերևոյթը, ինչպէս նաև բոլոր անհիւթերը որ շառաւիղը կ'անդրադարձնեն, պէտք է որ հաւասար հեռաւորութիւն ունենան առարկայէն ու անդրադարձեալ պատկերէն : Լուստի երբոր ջրին մէջ կը նայինք, որովհետև ոտուրնիս աւելի մօտ է ջրին մակերևոյթին՝ նախ անոնք կ'անդրադառնան . իսկ ընդ հակառակն գլուխը աւելի հեռու ըլլալով, իրեն պատկերը աւելի հեռու կը զարնէ, բայց նոյնպէս հաւասար հեռաւորութեամբ, անով գլխիվար կ'երևնայ պատկերը :

Ենչո՞ւ անձրև գալու ատեն կամ անձրևէն ետքը ծիրանի գօտի կ'երևնայ :

— Ս ան զի արևուն եօթը գոյները երբոր անձրևի կաթիլներուն վրայ քովնտի կը զարնէ, եօթը գոյներն ալ զատ զատ կը տեսնուին . անով կ'ըլլայ ծիածան կամ ծիրանի գօտի : Երբ անոնք կ'ըլլայ նաև խողովակներէն վար թափած ջրերէն ալ, որոնց վրայ արևն որ զարնէ ծիրանի գօտի կը ձևանայ :